

ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶԻ ԶԱՓԱԾՈՅԻ ԼԵԶՈՒՆ

Սմբատ Շահազազը հայ նոր քնարերգության հիմնադիրներից մեկն է: Լազարյան ճեմարանում ուսանելու տարիները շատ կարևոր էին Շահազազի բանաստեղծի և մտածողության, և լեզվի ձևավորման հարցում: Լազարյան ճեմարան աստիճանաբար ներթափանցում էր աշխարհաբարը, որը և խարխլում էր գրաբարի տիրապետությունը: Աշխարհաբարի մուտքը գրականության մեջ մեծ բեկում էր առաջացրել գրական-մշակութային կյանքում: Ուսուցչության տարիներին Շահազիզը ճեմարանում կիրառում էր աշխարհաբար շարադրություններ գրելու մեթոդը, որը նրա մանկավարժական գործունեության մեծ վաստակն է:

Շահազիզի ստեղծագործական կյանքը կապված է «Հյուսիսափայլի» հետ: Նրա լեզվական աշխարհը ներկայացնելիս պետք է նշել այն կարևոր հանգամանքը, որ այդ ժամանակահատվածում ձևավորվում էր գրապայքարը աշխարհաբարի գրականացման ուղիների որոնումը ժամանակի առաջատար գրողների ու մտավորականության հիմնահարցն էր դառնում:¹ «Ճռաքաղ» ամսագրում 1958թ. լույս տեսած նրա առաջին բանաստեղծությունը գրաբարով էր («Արարատյան դաշտ»), բայց 1860թ. արդեն Մոսկվայում լույս է տեսնում նրա «Ազատության ժամեր» աշխարհաբար բանաստեղծությունների ժողովածուն, որի լեզուն աշխարհաբար էր, որը և հաստ էր սովորական ընթերցողին:

«Ժամանակակից գրում եմ լեզվով,

Որ ամենայն մարդ կարդա, հասկանա... -/206/

գրում է հեղինակը «Լևոնի վիշտը» պոեմում: Նա արդեն լեզվական իր հավատամքը ընդունել էր.

Մանուկ հրաշագեղ, թոթով ոգելից,

Դու աշխարհաբար մեր սրտի թարգման,

Դու մեզ հարազատ ծննդյան օրից,

Թող քեզ նախատեն մարդիկ հնության.../207/

Բնականաբար պոեմում առաջ քաղած գաղափարները և նոր լեզվի պաշտոնությունը դրական են գնահատվում Մտ. Նազարյանի և Մ. Նալբանդյանի կողմից, որոնց հետ միասին Շահազիզը հայ նոր գրականության

¹ Մ.Ղազարյան, Հայոց լեզվի համանոտ պատմություն, Ե.2006, էջ 367-379:

հիմնադիր ԽԱրովյանի ծավալած աշխատանքի կրողն ու մասնակիցն է դառնում: Կատարելապես տիրապետելով գրաբարին նա լավ էր գիտակցում, որ գրաբարը չի կարող դառնալ ընթերցողի սրտին մոտ, քանի որ նա արդեն վաղուց սպառել էր իր գործառոյթը իբրև գրականության լեզու:

Բողոքում է խիղճն երկսայրի սրով,

Այդ սեփական չէ մեր ժամանակին,-

Ալեկոծեյան ծերերն հնասեր,

Փրփուրը ժայթքեց մորուքի վրա,

<<Վա՛հ, անմիտ կարծիք, վա՛հ անմիտ խոսքեր,

Հե՛, անտես առնենք լեզուն Աղամայ>>./208/

Շահագիգը, լինելով ժամանակի առաջատար մտածողության ջատագով ու կրող, բնականաբար գրաբարով սկսելով իր գրական գործունեությունը, պետք է շատ արագ հրաժարվեր նրանից: Այնուամենայնիվ նկատելի է մի կարևոր նորություն. նրա գրաբարով բանաստեղծություններում նույնպես տիրապետող է բանաստեղծի մտքի պարզությունն ու հստակությունը. <<Արարատեան դաշտ>>, <<Հայ մանուկ յօտարութեան>> բանաստեղծություններում գրաբարը հանդես է եկել հին հայերենի լեզվա-մտածողության բոլոր հատկանիշներով.

Մաքուր վտականի հոսին ի վիմաց

Ցայն ի ծաղկազարդ դաշտ լայնատարած

Ծառի շուրջ խիտ առ խիտ կան տերևազգաց,

Քաղցրաձայն երգեն երամք կաքավաց.../21/

Մտածողության պարզ է, գերծ խրթին ոճերից ու դարձվածքներից, գրաբարին բնորոշ խրթնաբան կուտակումներից: Բնության նկարագրությունը դառնում է ավելի մատչելի նույնիսկ գրաբարով կառույցներում:

Ի ծագեալ լուսոյ սոխակի անդադար

Երգեն հանգչելով ի թուփ և ի ծառ,

Ծիտք եւ ծիծեռունք անդէն անհամար

Ճոճուելով թրոյին ընդ օդս տարտամար.../21/

Ե՛վ բառապաշարը, և՛ քերականական միավորները չունեն դասական գրաբարի մտածողության բարդությունը:

Օտարության մեջ գտնվող հայի հայրենի հող վերադառնալու մեծ ցանկությունն ու բաղձանքն է արտահայտված <<Հայ մանուկ յօտարութեան>> բանաստեղծության մեջ.

Ըգբարինսըդ քո ե՛րբ համբուրեցից

Որք ողորյալ են արեամբ վկայից

Ցավոտ է, որ չկա մեկը որին նա դիմի.

Ընդ որում լեզուաւ իօսեցայց Հայկեան ...

Ուստի հեղինակին մնում է ցավով բացականչել.

Հայաստան թշվուռ, դժբաղդ Հայրենիք,

Հայենա ցյուր վայրս են ցրուել քոյդ որդիք.../22/

Հայրենիք վերադառնալու մեծ փափագը նախընտրել է կառուցել ստորադասական երկրորդ ապառնու բայաձևերով՝ համբուրեցից, ճաշակեցից, արբից, խոսեցայց, եկից /22/, ինչը բնորոշ էր նաև դասական գրաբարով մատենագրությանը, հատկապես չափածո խոսքին, ուր ստորադասական երկրորդ ապառնու բայաձևերը գերազանցապես գերակշռող են առաջին ապառնու բայերի համեմատությամբ²:

Հողառնության հետաքրքիր գործառույթ է հանդիպում Շահագիզի գրաբարով բանաստեղծություններում.

Ըզբարինադ քո ե բբ համբուրեցից.../22/

Ստացական հողը գործածված է համարժեք դերանվան հետևյալ էլ այն դրված է ստացական դերանվան վրա՝ ընդգծելով ստացականության իմաստը.

Հայենա ցյուր վայրս են ցրուել քոյդ որդիք.../22/

Գրաբարով նյութը ևս մեզ հիմք է տալիս մտածելու, որ որ նրա լեզվամտախողությունը հստակ է, պարզ. Ասես հեղինակը ձգտում է հևարավորինս պարզ դարձնել իր ասելիքն ընթերցողի համար:

Աշխարհաբարը, ժամանակի խոսակցական լեզու լինելով, կրում էր մի կողմից բանավոր խոսակցական լեզվական հատկանիշները և մյուս կողմից յուրաքանչյուր լեզվափոփոխ բնորոշ լեզվական իրողությունների նորմավորման գործընթացի ողջ նկարագիրը:

Նոր գրական հայերենի յուրաքանչյուր քերականական նորմի ձևավորման գործընթացը երևում է Շահագիզի քնարերգության լեզվում անկախ գործածված թեմայից ու գաղափարներից: Յուրաքանչյուր առաջատար գրող, մասնավորապես նաև Շահագիզը <<չէր կարող ժխտել նոր հայերենի հիմնական օրենքների գոյությունը, որոնք առանձին բնավորություն ու կերպարանք են տալիս նորան, հետևաբար և ոչ ոք իրավունք ունի ձեռնամուխ լինել այդ օրենքներին³:

Միջին հայերենյան շատ լեզվական միավորներ դեռ ճանապարհ ունեին անցնելու դառնալու համար նոր գրական լեզվի օրինաչափություններ: Շահագիզի բանաստեղծությունների լեզվական հատկանիշների

² Ա.Յուզբաշյան, Գրաբարի ստորադասական եղանակի բայաձևերը Գ.Նաթելյացու <<Մատենան ողբերգութեան>> պոեմում, Կանթեղ, գիտական հոդվածների ժողովածու. Ե., 2003, էջ 111-120:

³ Ա.Պալասանյան, Ընդհանուր տեսություն արևելահայ նոր գրական լեզվի հայոց, Թիֆլիս, 1870, էջ 3:

արժևորումը ներկայացնում է աշխարհաբարի կազմավորման ու զարգացման այդ գործընթացը: Օրինակ՝ ժխտման դերբայը միջին հայերենում արտահայտված էր չորս մակրակառուցվածքով՝ ի նախդիր գումարած անորոշ դերբայ գումարած օժանդակ բայի ժխտական խոնարհման ձևեր /չեմ ի խաղալ, չեմ ի խաղար/, այնուհետև նախդիրի գործածության անկում (քանի որ աշխարհաբարի կազմավորմանը զուգընթաց, դեռևս միջին հայերենի երկրորդ ենթաշրջանից սկսած՝ 15-դար, նախդիրների գործածությունը հակված էր վերանայլու)՝ չեմ խաղալ, չեմ խաղար, հետո նոր չեմ խաղա, իսկ „ե., լծորդության բայերի դեպքում՝ չեմ երգել, հետո չեմ երգե և ավելի ուշ՝ չեմ երգի: Շահագիզի մոտ հանդիպում է հետևյալ կառույցով.

Որ քո խնամք չեմ մոռանալ.

Խնամք ասեմ մայրենի:./23/

Շահագիզի բանաստեղծական լեզվում նման կառույցները վկայում են ժամանակի աշխարհաբարի այն բնորոշ առանձնահատկության մասին, որ լեզվական շատ միավորներ իբրև նոր ձևեր, ապա նոր նորմեր հաստատվելու համար դեռևս կիրառական նոր գործընթացի և նոր կադապավորման կարիք ունեին: Բացի սրանից՝ գրաբայյան մտածողության առկայությունը Շահագիզի՝ աշխարհաբարով գրված բանաստեղծություններում զգացվում է: Օրինակ՝ հանդիպում ենք գրաբայյան բայահիմքով աշխարհաբարյան կառույցներ.

Նա տեսանում էր և խտալական

Շաղկապյալ սիրտ միությանը կնքած

Հաջողակ գործը.../221/

Եվ ես մտախոհ կուսի աչքերու

Գուռնում եմ այն ,որ դիտե մի դեռևս.../226/

Այն մեծ երագ է, ես տեսանում եմ,

Հայի մութ աստղը փայլեց մի լուսո՜վ.../97/

Մի թե, ասացե՛ր, պետք է ծուխի պես

Անցանի մի օր, այդ ինչպես կարծիք:./87/

Կարծեմ, կիջանեմ հավերժ գերեզման.../92/

Ազնի՜ վ ընկեր.մեռանում եմ.

Բայց հանգիստ եմ ես հոգով.../158/

Եվ դու այդ օրից կորուսանում ես

Քո իրավունքը, որ դու ունեիր.../101/

Մենք չենք գտանում անգամ ինչ ստվեր.../63/

Գրաբարյան հրամայականի ձևեր նույնպես հանդիպում ենք.

Դու մի ողբար. սիրելի,

Ինձ նոր դու սեր տալու չես/69/

Կրավորական սեռի արտահայտության համար կրավորաձև վերջավորությունների գործածությունը ևս գրաբարյան կառույցներից մեկն է .

Նմանեցավ նորան խոսքուկ ու գործով/79/

Մեր կարծիքով, բացի աշխարհաբարի լեզվական հատկանիշներից, կարևոր նշանակություն ունի Շահագիզ-բանաստեղծի լեզվամտածողությունը, որը կարող է աշխարհաբարով բանաստեղծական տողերում կառույցել գրաբարին բնորոշ միադիմի բայ գումարած անորոշ դերբայ կաղապարը.

Ի դեպ է այստեղ, երիտասարդներ,

Որ դեռ նվիրված չեն կնոջ սրտին

Որ դեռ ցնորված չեն ճակաչել սեր,

Լսել խորհուրդս.../105/

Շահագիզը ցուցական (սա, դա, նա) դերանունների գրաբարյան կառույցներն օգտագործում է նաև աշխարհաբարով բանաստեղծություններում.

Թե ով էր Լևոն, և ինչ նորա ցեղ.../216/

Մայր մի ուներ ծեր: Նորա տեսության

Խիստ փափագում էր Լևոն կարոտից.../216/

Մասամբ Լևոնը պատճառեց նորան/216/

Խորտակել նորան ոտուկ ու գլխով

Ջանադիր էին, - Լևոն այդ գիտեր/217/

Դորա գրկում են և համբուրում են.../217/

Այսբան Լևոնը նման չէր նոցա.../218/

Երբեմն, հատուկեետ հանդիպում ենք նաև գրաբարաձև ինքեանք-ինքյանի ձևը:

Դուք ինքյանք տեսեք...ես ինչպես ասեմ/73/:

Կամ իւրեանց կառույցը.

Քնարօք իքեանց ոսկեշարեալ

Գեղգեղեին սրբազան/35/:

Հատկանշական է, որ գրաբարյան կառույցների կողքին գործածված են գրաբարյան հիմքով աշխարհաբարին բնորոշ հոլովաձևեր.

Կարո դ էր հասակ դոցանից մի պես

Վերանորոգիչ հարության նշան/218/

Դոցանից ձևը աշխարհաբարի բացառականի անվանական հոլովմանը բնորոշ ից-ով կառույց է, բայց հիմքը գրաբարյան է դոցա: Այս կառույցները աստիճանաբար պեսիք է ազատվեն նաև գրաբարյան հիմքերից:

Շահագիզի աշխարհաբարով բանաստեղծությունները նույնպես պարզ են, ընթերցողին մոտ և հասանելի: Այդ բանաստեղծություններում դրսևորվում են հետևյալ լեզվական հատկանիշները:

ա/Գրաբարյան մտածողության լեզվատարրեր, կադապարներ ու մանրակադապարներ /օրինակ՝ գրաբարյան հիմքակառույցներ „սան,, սոսկածանցով, դերանվանական հիմքեր և հոլովածներ (հատկապես սա,դա,նա դերանունների կիրառական տիրույթում),հոգնակիի կազմության գրաբարյան „ք,, հոգնակներով ձևերի ատկայություն, օրինակ

Եվ կանաչագարդ աճում են սոսիք/215/:

Նվագում է պարն քաղցր մեղեղիք /215/:

Պատճառականի կազմության գրաբարյան ձևեր՝

Գարող էիր դու ինձ հասուցանել /115/:

Եվ դու այդ օրից կորուսանում ես

Քո իրավունքը որ դու ունեիր/101/:

Այս օրինակում ես աշխարհաբարյան կառույց է գրաբարյան հիմքով:

Գրաբարյան լեզվական միավորները նաև գրաբարյան դեռևս տիրապետող լեզվամտածողության արտահայտությունն են, ինչպես միադիմի գումարած անորոշ դերբայ կառույցը՝ հարկադրական իմաստի արտահայտման համար:

բ/Բանավոր խոսակցական լեզվին բնորոշ լեզվատարրեր, կադապարներ և մանրակադապարներ, օրինակ՝ շատ տարածված է ստացվան հոդի գործածությանը համարժեք դերանվան հետ:

Թող գեղգեղե քաղցրահնչյուն

Քաղցրիկս իմ լսելի/33/:

Եվ քո բույրերիդ այդ քեզ խիստ վայել

Առաջնորդուհի հանգստանայիր/115/:

Ի դեպ հոգնակի թվի կազմության հետ կապված նկատելի է հետևյալ առանձնահատկությունը. այն գոյականները, որոնք վերջանում են ի՝ ձայնավորով հոգնակին կազմում են գրաբարաձև „ք,, հոգնակներսներ -եր և -ներ ձևությներով: Հոդառության հետ կապված նկատելի է „ն,, որոշիչ հոդի հետևյալ գործածությունը

Մորս արտասուքն ծովանում է

Եվ չունի՝ ժամ երջանիկ.../173/:

Քաջ նավորդներ Ձեր գայլ բարի.

Զեզ գեղեցիկ պսակ արծաթի/195/:

Հաջորդող բաղաձայնը չի խանգարում հեղինակին „ն,, որոշիչ հոդի գործածության համար. մեր կարծիքով և՛ բանավոր խոսակցական լեզվի ատկայությունն է այստեղ, և՛ որոշիչ հոդի գործառական դաշտի ոչ նորմա-

վորումը, մանավանդ բառի ուղիղ ձևերում անգամ Շահազիզը „և,,
գրաբարյան վերջնահնչյունը պահպանում է :

Բայց Հա յն քնած է կորստյան քնով/135/:

Կերթան և բլուրն, և իմ հիշատակ/175/:

Կամ որոշիչ հոդի գործածությունը ներգոյական հոլովի հետ ,որը
բնորոշ չէ գրական հայերենին .

Անտառումը ման եմ գալի,-

Գլուխ եև տալիս ինձ ծառեր/53/:

Աշխարհաբարի մշակման հարցում Շահազիզը հետևում էր Մ.
Նալբանդյանի սկզբունքներին,որոնց հիմքում ընկած էր լեզույն ժողովրդին
հասկանալի դարձնելու նպատակը: <<Հայոց ազգային լեզուն,որը մշակվում
էր Արարատյան բարբառի հիման վրա, հասավ զարգացման այնպիսի
աստիճանի, որի մեջ ներառված էին ինչպես գրաբարի, նույնպես և
բարբառների հարստության լավագույն տարրերը>>⁴:

Ըստ հայոց լեզվի պատմության գիտական շրջանաբաժանման հայե-
րենի զարգացման երրորդ շրջանը ներկայացնում է երեք ենթաշրջանով
վաղ աշխարհաբարի (17-րդ դարի սկզբներից մինչև 19-րդ դ. կեսը), ուշ կամ
երկճյուղ աշխարհաբարի շրջան (19-րդ դ. կեսից մինչև 1920թ.),
ժամանակակից (1920թ. մինչև մեր օրերը)⁵:

Շահազիզի քնարերգության լեզուն ներկայացնում է աշխարհա-
բարի երկրորդ երկրորդ ենթաշրջանի հատկանիշներով, երբ լեզվական
հատկապես, հատկապես ձևաբանական մակարդակի միավորները դեռ
չէին նորմավորվել: Օրինակ՝ օժանդակ բայի 3-րդ դեմքի <<է>> կամ <<չէ>>
ձևերի պահպանումը հարացույցում:

Գեղեցկությունը չէ կարոտում

Փայլողության արտաքին/127/:

Ինչու ,ինչու ,Իտալացիք

Չէ թնդում քաղցր երգեհոն/177/:

Ազատ այն հոգին, որին չէ գրավել

Անմիտ ամբոխի ծափահարություն

Որին բնավին չէ վշտացրել

Կոպիտ մարդերի չարագործություն/52/

<<Ե>> լծորդության երրորդ դեմքի բայաձևերը պահպանում են
խոնարհման հարացույցի եզակի թվի ե-ն.

Թող ճաշակե մաքուր հոգիդ.../104/:

⁴ Ս Ղազարյան, Հայոց լեզվի համանոտ պատմություն, Ե, 2006, էջ 372:

⁵ Գ.Ջահուկյան, Հայոց լեզվի պատմության նախագրային ժամանակաշրջան, Ե, 1987, էջ 26:

Գիտե գրավել շողուն ճաճանչով/124/:

Համակատար դերբայը կարող է հանդես գալ նաև -ի- (իս-ի փոխարեն) վերջավորությամբ.

Անտառումը ման եմ ցալի.-

Գլուխ են տալիս ինձ ծառեր..

Ինձ յուր արվեստն է ցույց տալի /145/:

Խոնարհման հարացույցի նման կառույցների մի մասը բանավոր խոսակցական լեզվի արտահայտությունն է (ինչպես համակատարի ձևերը), իսկ է-(ե)-ով ձևերը խոնարհման հարացույցում -ե- լծորդության բայերի ե>ի հնչյունափոխության իբրև նորմի ձևավորման նախորդող փուլն է:

Բանավոր խոսակցական տալի, ցալի ձևերի կողքին նա գործածել է նաև <<իս>>-ով ձևեր.

Միանգամայն ասել աշխարհ

Չայն է տալիս խնդություն... /27/:

Միջին հայերենի մասին խոսելիս նշում ենք, որ գրաբարյան լեզվական շատ իրողություններ որոշակի փոփոխություններ են կրում միջին հայերենում և այդ փոփոխություններ երկու ուղղվածություն ունեն քերականական հին ձևերի մեջ նոր իմաստների ամրակայման և նոր օրինաչափությունների ձևավորման: Միջին հայերենը քերականական նորմերի տեսակետից, մեր կարծիքով, անցման շրջան է ներկայացնում, երբ հատկապես երկրորդ ենթաշրջանում է, որ նրանք իբրև նորմեր կայացման, հաստատման միտում են ցուցաբերում:

Վաղ աշխարհաբարի ենթաշրջանում աշխարհաբարի նորմերի մասին չէինք կարող խոսել. այն դեռևս ձևավորման գործընթացի մեջ էր: Երկրորդ ենթաշրջանում արդեն ամրակայվում են որոշակի օրինաչափություններ կամ գտնվում են այդ ճանապարհին:

Շահագիզի բանաստեղծական լեզուն, արժևորելով նկատում ենք.

ա/բայական համակարգում աշխարհաբարին բնորոշ հինգ եղանակների բայաձևներն ամրակայված են, միայն ձևային առումով բայական հարացույցի որոշ միավորներ դեռ ձևավորման ընթացքում են, օրինակ՝ ժխտման դերբայի կազմում դեռես -լ- և չի ընկել /չեմ մոռանալ/, ըզձական, պայմանական, հարկադրական եղանակների ապառնու եզակի թվի 3-րդ դեմքում ե<ի հնչյունափոխությունը դեռ չի կատարվել.

բ/աշխարհաբարին բնորոշ -եր, -ներ հոգնակերտների կողքին, հեղինակը գործածում է հոգնակիի գրաբարատիպ կառույցներ.

Տխուր է, եղբայրք տխուր է մեր դար/94/:

գ/Շահագիզը սիրում է գործածել արգելական հրամայականի գրաբարատիպ ձևեր.

Դու մի ողբար, իմ սիրելի,
Ինձ նոր դու սեր տալու չես/69/:

Շահագիգի բանաստեղծական լեզուն նոր գրական հայերենի երկրորդ ենթաշրջանի հատկանիշներն է ներկայացնում: Աշխարհաբարի գրականացման համար ժամանակ էր պետք: Հետևելով նրա մշակման նախադրյանական մոտեցմանը՝ նա գիտակցում էր, որ նոր ձևավորվող յուրաքանչյուր լեզվափուլ շարունակությունն է նախորդ շրջանի լեզվական իրողությունների գրանցման և նրա մշակման համար ոչ թե իբրև հիմք պետք է ընդունել գրաբարը կամ որևէ բարբառայլ գրաբարի, բարբառների այն նվաճումները, որոնք անխուսափելիորեն պետք է անցնեն նոր լեզվափուլ:

Լեզուն ինքը, լինելով կառուցվածքային մի կոտ համակարգ, ունի ինքնազարգացման գործառույթ, որը միտված է ուղղակիորեն արտացոլելու հասարակական կյանքի փոփոխությունները:

Հայոց լեզվի պատմության գիտական շրջանաբաժանում կատարելիս ակադ. Գ.Ջահուկյանը առանձնացնում է լեզվի զարգացման երեք փուլ՝ իր ենթաշրջաններով: Դա պատահական չէ: Յուրաքանչյուր ենթաշրջան նախապատրաստում է լեզվական օրինաչափությունների և նորմերի, դրանց բացառությունների ձևավորումը, որոնք ամրակայվում են տվյալ լեզվափուլի ավարտին դառնալով հիմք նախորդ և հաջորդ սահմանագծման:

Շահագիգը հետևում էր Խ.Արմյանի և Մ.Նալբանդյանի այն մտքերին, որ լեզուն ժողովրդի հարստությունն է, ազգային լեզուն ազգի գոյության և լինելության հիմնաքարերից մեկը, նրանով ստեղծվող գրականությունը նույնպես ժողովրդի հարստությունն է, հետևաբար այն պետք է լինի հասկանալի ընթերցողների համար, սիրելի նրան ընտրված թեմատիկայով և հարազատ այն լեզվով, որով ինքը մտածում է և խոսում:

The poetic language of Smbat Shahaziz

The article represents a study on the poetic language of Eastern Armenian poet Smbat Shahaziz of the 50s-60s of the 19th century. At the outset Shahaziz wrote in Old Armenian (grabar), but he gave preference to Modern Armenian (ashkharhabar) as the latter had got established as a literary language. Modern Armenian orientation of Shahaziz's poetic language is reflected through the five units of the declension paradigm, although in his poems we may find use of several verb tenses, grabarian structures such as grabarian forms of demonstrative pronouns, passive voice which prove best that the poet was paving his own way of making Modern Armenian a literary language overcoming Old Armenian and the dialects taking from them what was necessary. He was also normalizing and regulating Modern Armenian as a language quality.